

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 15 (35)

ՏԱՐԵԿԱՆ ԲԱՃԱԿՆՈՐԻՒԹՅՈՒՆ

Մեծագույն թիվը 20 դրամ
Կապի ծախսեր 25 դրամ
ԱՐՏՍՍՍՍՍՍՍՍ
Որոշման 5 ռաբ
Թուրքիա 50 դրամ
Եւրոպա 14 ֆրանկ
Ամերիկա 2,50 տոլ.

Յաջաբար տպագրող փառք
Առաջին երեսում տպագրող . . . 20 օանի
Զուգորդ 10
ԱՌԱՆՁՈՐՆ ԶԱՄԱՐԸ 8 ԵՄԷԻ

Խմբագրության ճասճեմ Բարիկ
Միջժ.ի Խմբագրության կամ Tauris Perse
Rédaction du journal arménien „MITK“
= Adresse télégraphique Tauris „MITK“ =

MITK

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ - ՀԱՍԱՐԱԳԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ

اداره روزنامه میلق

Anzeigebblatt fuer Persien

MITK

Propriétaire & Editeur en chef

Al. Der-Vartanian

Le Gérant

Mihran Baghdassarian

TERMS OF SUBSCRIPTION

for a year payable in advance 20 kran.

Foreign Dollars 2. 50

RATES OF ADVERTISEMENTS:

one printing line on the 1-st page 10 cen.

15% discount for annual subscrip-
tion paid in advance. Address

The „MITK“ Publication Co-
Tabriz, Persia

Published by the „MITK“ Publication Co and Advertising Agency, Tabriz, Persia

4. ՏԱՐԻ № 15 (35) ԹԱԻՐԻԶ, ՇԱԲԱԹ 26 ՄԱՐԿ, 1914 Թ.

Tauris, Samedi 26 Mai 1914 № 15 (35) Vol. III

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Требуйте и курите папирасы только

М. Д. „Бр. Сейлановых“

Египетскія, Марсѣ, Триана, Марсѣ, Орелъ
и Марсѣ.

продаются во всѣхъ магазинахъ

ԱԶԴ

Ով ուզում է կարճ միջոցում լաւ և հարազատ արտասանութեամբ
պարսկերէն սովորել, թող դիմի Արամեան դպրոցի ուսուցիչ՝ յայտնի
Արարա-Պարսկագէտ պրն. Էդիպ-Խաղանին:

Ուրիշ ԶԱՅՏԻՔՔ ՓԱԽԶԻ ԶՈՀՈՂՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ ԵՒ
ԻՆՔՆԱՊԱՆԱԶՈՒԹԵԱՆ ԵՄԷՄԵՐԻՑ

Նախըզ համարում մենք խօսեցինք
Ուրիշ չայոց մասին. պէտք ենք համարում
խօսել և այժմ:

Մեզ խօսել է տալիս սոյն համարի
Ուրիշ խիստ ազդու թղթակցութիւնը
և մանաւանդ մեր ազգային ոտնակոխ
պատիւը:

Մենք ցատում ենք դառնապէս, որ
մեր ժողովուրդն այնքան զարգացած
չէ, որ ամեն տեղ ինքը կառավարէ ի-
րան առանց այլոց պաշտօնողութեան
կարօտիւ և առանց իր ազգային - հա-
սարակական շահերը վտանգելու:

Շոտլանդական, խաւար և յետամնաց
վիճակը պարտադրում է մեզ, որ մենք
դեռ կառավարուենք Էջմիածնի «սուրբ
կամ սրբազան» (?) հայրերով:

Մեր յետադէմ վիճակում մենք
ընդունում և անգամ պարտադիր ենք
համարում, որ մեր անդուլտ ժողովուրդին
տէր ու ղէտ և ժողովրդավար հովիւներ
կարգուին մեր հոգևորականներին մին-
չև ժողովուրդը հասնի ինքնակառավար-
ման ցանկալի արտիքանին:

Այդպիսի հովիւ հանդիսացաւ Ուր-
միոյ շրջանի համար Կ. Լազարեանը,
որի ղէմ մենք սկզբում բացասաբար
արտայայտուեցինք՝ ինչ-ինչ պատճառա-
բանութիւններով:

Նա իր արդիւնաւոր պաշտօնավար-
ութեամբ կարողացաւ իրեն օգտակար
դարձնել Ուրմիոց և պահել այդ շրջանի
մեր դժբաղդ ու մոռացուած ազգակից-
ներին ամուր բաղուկների ճախմուռներից,
կեղծիքների ճանկերից և կլանիչներից:

Սակայն իր ժողովրդին պահողը՝
չի պահում նոյն իր Ժողովրդից: Ահա
հայկական մի կուրամութիւն, որ չի
բուժում դարերի այսքան դառն փորձե-
րից յետոյ:

Մեզ յայտնի են փաստեր, որ նա-
մեն-մենակ կատարում է անուամբ մի-
այն գոյութիւն ունեցող, իրօք չիղեայ,
գործակ. խորհրդի բոլոր գործերը: Նա
ինքն է՝ «Եփեսոսացի», և քարտուղար,
և տէր ու ծառայ և այլն, առ ի չզոյժ
մարդու և մանաւանդ դատի:

Ժողովրդի այդ ժիր և սակաւակտ
հովիւր տեղաւորուած է մի ճգնաժամի
միայն վայել եռասնեան քնակարում և
չգիտէ ամօթից ուր թաղչի, երբ դա-
տաւոր, կոնսուլ, օտար միստայից բար-

ձրաստիճան անձինք կամ պատուաւոր
մարդիկ այցի են գալիս իրեն, հայու-
թեան ներկայացուցչին «ճէնարը խալի-
ֆին»:

Երևալիցէր, որ նա՝ անգամ մի
կարգին ծառայ չունի, և ոչ էլ պատ-
րաստութիւն, որ գոնէ մի համեստ թէյ
մատուցանէ հիւրերին:

Իսկ այս անշնորհեան և ծայրաս-
տիճան խեղճութեան փոխարէն դուր
աչքի առաջ բերել օտարներին՝ իրենց
փառահեղ առաջնորդարաններով, պա-
լատանման շէնքերով, դրամապէս հա-
րուստ կրօնական ներկայացուցիչներով
և պարզ կիլիկի ձեզ մյն անտանելի
ճնշում ու նուաստացումը, որ զգում
է ամեն անգամ տեղական հարուստ հա-
յոց՝ ինքն ու ընտանիքը վարդապետը:

Էջմիածինը, որին ամենից աւելի
յայտնի պէտք է լինի ամեն տեղի և
մանաւանդ Էջմիածնի թուրքերով խեղ-
դուած Ուրմիոյ շրջանի իւր այս խեղճ
ժողովուրդի վիճակը, անաւարտ ձեռ-
ցու տիրող սուր կարիքի առաջ և կըտ-
րեց ամսական այն 30 րուբլին, որ ա-
ռաջները տալիս էր Կ. Լազարեանին:

Քանի-քանի աւելորդ մարդիկ և
ազգի համար աղօթող, պղծաշուրթ
անմիաբան-միտքաւորներ չան Էջմիած-
նում, որոնց կամ կարելի էր աւելի
այնտեղից կամ նոցա ողակից յապա-
ւումներ անել և դրամը ղրկել Ուրմի, որ
ժողովուրդը պահուէր օտարի ոտնձգու-
թիւններից և կու գնալուց:

Եթէ Էջմիածինը, ի մեղադրանս
իւր, միստիօնարական գործ չի կարող
կազմակերպել, նա պարտաւոր է գոնէ
իր զանձից ծախսեր անել և պահել
արդէն ձեռքից դնալու վրայ եղող իւր
ժողովուրդին:

Բայց բանի որ Էջմիածինը չէ ըզ-
բաղում իւր միստայով, պէտք է տե-
ղական հայերը փրկեն իրենց՝ բարձր
պահելով իրենց արժանաւորութիւնը օ-
տարների և Պարսիկ կառավարութեան
աչքում:

Ուրմիում կան հարուստ վաճառա-
կաններ, ապահովուած և պալատական
շէնքերի տէր և գիւղերի հօգը ու ունե-
ւոր վարձակալ հայ մարդիկ, որոնցից
իւրաքանչիւրն հինգ կարող էր, եթէ ոչ
գնել, գոնէ իւր դրամով վարձել մի փա-
ռահեղ բնակարան իւր՝ ճոխ կահլարա-
սիրով և տալ այդ ի մշտական բնակու-
թիւն հայ հովուի: Եթէ այդ չի անում

և չի արել մի անհատ, թող անեն այդ
բոլոր աչքի ընկնող հայերը: Ինչ կնստի
որ դա իրենց վրայ: Սակայն աղիւնները
այն կիլիկի, որ օտարները, այցելուները
այդ փառաւոր բնակարանով կապեն
հայոց պատիւը, ոյժը, և մեծութիւնը:
Ինչ արած, դարձ այնպէս է, որ հմայիչ
արտաքին է համարում պատուի, ար-
ժանիքի և ուժի նշանակ. Ոյգպէս են
վարում օտարները, այդպէս են վար-
ում ամեն տեղ, նոյնը պիտի անենք և
մենք:

Պատուի հարցը ամեն բանից բար-
ձր է և բարձր պէտք է լինի մի հա-
մայնի համար:

Ուրմին ամիսներ առաջ մի պատու-
աւոր շարժ արեց իւր դպրոցների հա-
մար, նոյնը պէտք է անէ և այժմ՝ իւր
հովիւր պահելու համար:

Պահէր ձեր հովիւին, որ փոխադար-
ձաբար նա էլ ձեզ պահէ:

Ուրմին պէտք է գոհողութիւններից
չփախչէ. նա կամ անհատաբար, կամ
հաւաքաբար պէտք է պահէ մի փառա-
ւոր յաջորդարան և իր յայրերին՝ իւր
արժանի դիրքի ու Բարձրութեան վրայ:
Եթէ այսօր հեռանայ այնտեղից Կ.
Լազարեանը, նոյնը կանի և նրան փոխա-
րիւղը, եթէ լինի կամ պատուի այդ
քաջը մեր փափկեաց վեհաբաւորների
միջում:

Եթէ հեռանայ այնտեղից յաջորդը,
կընդունի նրա շինածը, նորից կկրկ-
նուին Իսալու և Քիւրա գիւղերի դրամա-
ները և այլ ևս մարդ չի լինի փրկելու
նման գոհներին, որոնց փրկել էր Կ.
Լազարեանը:

Հապկացոյցները, կարողները պէտք
է զգան, որ ժողովուրդը կկորսուի, եթէ
նրանք խուսափեն ծախսերից՝ յօգուտ
մի յաջորդի, որ նոյնպէս իրենց պէս
ապրել և ծախսել է պարտաւոր:

Եթէ կոնսուլի ղրկած տոմսին ի
յաջահան՝ ոմն, օտար և լոկ իր գրպանի
համար աշխատող աւիատըր Կուզմիս-
կուն Ուրմիոյ մեր հայերը կտան 100-ա-
կան ըուբլի, միթէ հէնց ի յարգանս
իրենց ազգային արժանապատուութեան
նոյն հայերը չեն տայ նոյն գումարը:
կամ զրա կէսը, պահելու մի պատուաւոր
յաջորդարան, մի յաջորդ պատուաւոր
ու ազգեցիկ դիրքով, յապահութիւն և
ի բարձրացումս գաւառական մեր ան-
պաշտպան հայութեան:

